

րոստացան, բայց յետոյ միաբան հաւանութեամբ ընտրեցին զանիկա իրենց հովիւ, ինչպէս կը վկայէ այն հաստատագիրը, զոր 1626ին կնքեցին հայ Երեսփոխանները<sup>9</sup>» Երեսփոխանները անմիջապէս ներկայացուցին թագաւորին խնդրագիր, հաստատելու նորընտիր առաջնորդին ընտրութիւնը: Սիկիսմունդ Գ. ի հաստատագիրը կը կրէ 29 Մարտ 1629 թուականը<sup>10</sup>:

1627 տարին անցաւ առանց միջադէպի:

#### ԳՐԻԳՈՐ ԿԵՍԱՐԱՑԻ

Յաջորդ տարին Կամենից կը ժամանէ Գրիգոր Վ. Կեսարացի, հաւանօրէն ուղարկուած Մովսէս «լուսարարէն» ի նպատակը միաձնի նուիրակութիւն ընելու<sup>11</sup>: Նոյն օրերը նիկոյ եպիսկոպոս ի Կամենից արեղայ ձեռ-

<sup>9</sup> Relatio brevis. Հաշտութեան բանաձեւը յստաջ բերուած է լեհերէն բնագրով:

<sup>10</sup> Ամբողջութեամբ յստաջ բերուած լատիներէն բնագրով Relatio brevis: Այս թուականէն սկսեալ կը ստորագրէ. «Նս նիկոյ Պր. Եաղուպի որդի, մականուամբ Թորոսովից, Աստուծոյ ողորմութեամբ արքեպիսկոպոս եւ յաթոռակալ Հայոց Լովա եւ ամենայն Լեհաց աշխարհի եւ Պողտանաց երկրի... ի... Կամենից... թվ. Հայոց Ռ. Հ. Օգոստոսի ԼԱ. օրն Բ. շէ»: Տաշեան, Յուլ. Միսթ., էջ 692: Հմմտ. եւ անդ էջ 630 («Նիկոպոս Թորոսեանց...»), եւ Սարգիսեան, Յուլ. Միսթ. Ա., էջ 410 («...արքեպ. Հայոց եւ յաթոռակալ եւ վարդապետ Լովա»):

<sup>11</sup> «Գրիգոր Վ. Կեսարացի 1627ին Յովհ. Խունի աթոռէն տապալելէն ետեւ՝ փութաց էջմիածին եւ անկէ Լեհաստան՝ Նիկոպոսի դէմ կռուելու» կը զրէ Հ. Գ. Գալէմբերեան, Կենսագրութիւններ երկու Հայ պատրիարքներու եւ տանն եպիսկոպոսներու. Վիեննա 1915, էջ 29: Ինձի ծանօթ չէ այլուստ Կեսարացոյ էջմիածին ուղեւորութիւնը: